

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/3

14 օգոստոսի 2014 թ.

Քննարկվեց «Միհրշին» ՍՊԸ 25.07.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը 2014 թ-ի հունվարի 8-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ:

«Միհրշին» ՍՊԸ դիմումում բերված փաստարկները.

«Միհրշին» ՍՊԸ-ն 2014 թ-ի փետրվարի 13-ին ներկայացրել է ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, որպեսզի սույն թվականի հունվարի 8-ից համարվի ԱԱՀ վճարող: Սակայն տեղի է ունեցել թյուրիմացություն և հայտարարությունում սխալ է գրվել ԱԱՀ վճարող համարվելու ժամանակահատվածի սկիզբը՝ 2014 թ. 01.08-ի փոխարեն գրվել է 2014 թ. 08.01:

«Միհրշին» ՍՊԸ-ն երկու եռամսյակ շարունակ աշխատել է ԱԱՀ-ով և ներկայացրել է ԱԱՀ-ի հաշվետվություններ, որոնք ընդունվել են հարկային տեսչության կողմից: Միևնույն ժամանակ տեղեկացվում է, որ «Միհրշին» ՍՊԸ-ն համագործակցել է միայն ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունների հետ:

«Միհրշին» ՍՊԸ-ն հանդիսանում է բարեխիղճ հարկ վճարող և չունի ոչ մի հարկային պարտավորություններ:

Ելնելով վերոգրյալից՝ դիմումատուն խնդրում է «Միհրշին» ՍՊԸ-ին համարել ԱԱՀ վճարող 2014 թ-ի հունվարի 8-ից:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ «Միհրշին» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, 2014 թ-ի փետրվարի 13-ին ներկայացրել ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սակայն, հայտարարությունում թյուրիմացաբար ԱԱՀ վճարող համարվելու ժամկետի սկիզբը 08.01.2014 թ-ի փոխարեն նշվել է 01.08.2014 թ-ը:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, ըստ էության, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Միհրշին» ՍՊԸ 25.07.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

«Միհրշին» ՍՊԸ 25.07.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը՝ 2014 թ-ի հունվարի 8-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ